# ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

## ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՅՍՕՐՎԱ ՄԻ ՔԱՆԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կենսաբանական գիտ. դոկտոր Ռ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ժ. Կ. ԲԱԲԱՅԱՆ

*Հայտնի է, որ 1930-ական թթ. սկզբներին Սևանի ջրի դարավոր պաշարների օգտագործման մասին անհեռատես որոշումները իրականացվեցին այնքան վնասարարական ձևով, որ լճի մակարդակը արագորեն իջեցվեց 18 մետրից ավելի, ստացված էլեկտրաէներգիան ծախսվեց հանրապետությունում անմտածված կերպով ստեղծված ոչ աշխատատար, բայց խիստ էներգատար և ժողովրդի առողջության համար վնասակար քիմիական և մետալուրգիական արտադրությունների զարգացման համար։*

*Ջուրը օգտագործվեց անվերադարձ, բայց պրոբլեմները օրավուր շատացան և բարդացան։ Լճափնյա շրջանների մերկացման և ճահճացման հետ մեկտեղ այնքան խիստ փոխվեց լճի էկոլոգիական ռեժիմը, որ ջրակենսաբանական շատ պրոցեսներ անդառնալիորեն խաթարվեցին։ Այս ամենի վրա ավելացավ և այն, որ տասնամյակների ընթացքում Սևանը վերածվեց իր ավազանի համարյա բոլոր բնակավայրերից դեպի լիճը հոսող ամեն տեսակ կեղտաջրերի հանգրվանի...*

*Այս եղանակով սակավաջուր դարձած Սևանը վերածվեց նաև հիվանդ Սևանի։ Ահա թե ինչու Սևանի պրոբլեմը մեր հանրապետության գլխավոր, կենտրոնական էկոլոգիական պրոբլեմն է, որի լուծումը պահանջում է համապետական, համաժողովրդական, գիտականորեն ամենալուրջ հիմնավորում ստացած միջոցառումների երկարատև իրականացում։*

*Այսօր մենք շատ տեղին քննադատում ենք 1930-ական թթ. գիտնականներին, որոնց անհեռատես և անխիղճ ինժեներական մոտեցումը լճի բնական ռեսուրսները հասցրեց էկոլոգիական կատաստրոֆի։ Նույն ցավալի տեխնոգեն մոտեցումը շարունակվում է և այսօր, որը խորացնում է Սևանի մակարդակի իջեցման հետևանքով անկայունացած լճի էկոլոգիական հավասարակշռությունը։*

*Մենք ստորև կաշխատենք ընթերցողին ներկայացնել Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի այսօրվա իրական վիճակը և գիտական ու գործնական այն անհրաժեշտ ու առաջնահերթ միջոցառումները, որոնք անհետաձգելիորեն պետք է իրացվեն հանրապետության իրավասու մարմինների կողմից։*

*Մեր հանրապետության համար կենսական կարևորագույն և առաջնահերթ նշանակություն են ունեցել և այսօր էլ ունեն էներգետիկ, տնտեսական և էկոլոգիական պրոբլեմները, որոնց լուծումները միշտ սերտորեն կապված են եղել հանրապետության ջրային ռեսուրսների հետ։ Այս է պատճառը, որ նշված պրոբլեմների լուծման հետ մեկտեղ, առաջնահերթ անհրաժեշտություն են դառնում ջրային ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման հարցերը։ Հոսքային ջրային ռեսուրսները առանց Սևանի կազմում են 7,3 միլիարդ խոր. մետր, որից մակերեսային ջրերի հոսքը՝ $6,7 \cdot 10^9$ մ$^3$ կամ եղածի 90 տոկոսը։ Այս քանակության միայն 50 տոկոսը կամ $3,4 \cdot 10^9$ մ$^3$ կարելի է ջրամբարել (արհեստական ջրամբարների միջոցով)։ Այսօրվա դրությամբ ջրամբարված է միայն $1,0 \cdot 10^9$ մ$^3$ ջուր, կամ եղածի 25 տոկոսը, իսկ մնացած 75 տոկոսը կամ 2,5—3 միլիարդ մ$^3$ ջուրը արտահոսում է հարևան հանրապետություններ։ Այս թվերը բերվեցին, որպեսզի պարզ դառնա Սևանա լճի դերը հանրապետության ջրային հաշվեկշռում։*

Սևանա լիճը այսօր պարունակում է մոտ 34 միլրդ մ³ ջուր, որը 5 անգամ ավելի է ամբողջ հանրապետության հոսքային ջրերից և 34 անգամ ավել՝ արդեն ջրամբարված ջրերից։

Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ հանրապետությունում ոռոգելի հողերի միայն 40 տոկոսն է ապահովված ջրով, ավելի քան 1200 բնակավայրերից միայն 255-ը կամ 22 տոկոսը ունեն խմելու ջրի կայուն աղբյուրներ և շատ արդյունաբերական ձեռնարկություններ տեխնիկական ջուր չունենալու պատճառով օգտագործում են խմելու ջուր, ապա պարզ կդառնա Սևանա լճի հսկայական, որոշիչ դերը հանրապետությունում որպես խմելու ջուր, ինչպես նաև գյուղատնտեսական, արդյունաբերական և էներգետիկ նպատակներով օգտագործելու համար։

Քանի որ այդ նպատակների համար օգտագործվող ջուրը պետք է ունենա համապատասխան որակական չափանիշներ, ապա բազմակի մեծանում է Սևանա լճի բնական ռեսուրսների պաշտպանության և նպատակային օգտագործման անհրաժեշտությունը, որը հանրապետության առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լիներ։

Ինչպես հայտնի է, Սևանա լճի բնական ռեսուրսների նկատմամբ տարվող սպառողական քաղաքականության ե էկոլոգիական տեսանկյունից ոչ դրական օգտագործման պատճառներով լիճը անցավ էֆտրոֆ (աղտոտված) կենսամակարդակի։ Օլիգոտրոֆ (չաղտոտված) կենսամակարդակում ֆիզիկո-քիմիական, կենսաբանական և հատկապես մանրէաբանական պրոցեսները, գտնվելով խիստ հավասարակշռված վիճակում, արգելակում էին լճում օրգանական նյութի կուտակմանը, որի ինտենսիվ քայքայումը ապահովում էր նյութերի բիոգեոքիմիական շրջանառության ճիշտ հաշվեկշիռ, որի շնորհիվ կենսաբանական արդյունավետությունը շատ ցածր էր, իսկ ջուրը՝ շատ որակյալ։

Էֆտրոֆ կենսամակարդակում խախտվում է նշված պրոցեսների հավասարակշռությունը, ջրում սկսում է կուտակվել օրգանական նյութ, որը հանգեցնում է լճում նյութերի բիոգեոքիմիական շրջանառության դրական հաշվեկշռի։ Սրա հետևանքով լճում կենսաբանական, հատկապես նրա ավտոտրոֆ ենթահամակարգի արդյունավետությունը անհամեմատ բարձրանում է, իսկ ջուրը դառնում է անորակ։

Կաշխատենք բացատրել, թե ի՞նչ պատճառներով և ինչպիսի՞ մեխանիզմով Սևանա լիճը օլիգոտրոֆ կենսավիճակից անցել է էֆտրոֆ վիճակի և այսօր ի՞նչ է արվում նրա բնական ռեսուրսները վերականգնելու և պահպանելու ուղղությամբ։

Շատ կարճ կանգ առնենք Սևանի պրոբլեմի պատճառների վրա։ Այս հարցը բարձրացվել է դեռ 1800-ական թթ., անգլիացի գիտնական Ստյուարդի կողմից։ Այնուհետև 1920-ական թթ. այստեղ իր աշխատանքները սկսեց ակադեմիկոս Լևինսոն-Լեսինգի գլխավորած գիտական արշավախումբը, որի նպատակն էր ի հայտ բերել բարձրլեռնային լճերի ջրերի բազմանպատակ օգտագործման հնարավորությունները։ Այս մտքի հիմնավորումն այն էր, որ բնական պայմաններում լիճ մտնող ջրերի ընդհանուր քանակի մոտ 90 տոկոսը (1100 · 10⁶ մ³) գոլորշիանում էր։

Մտածելով, որ «անօգուտ» գոլորշացող այդ ջուրը կարելի է տարբեր նպատակներով օգտագործել հանրապետության տարածքում, որոշվեց քշացնել գոլորշացումը՝ լճի մակերեսի փոքրացման ճանապարհով։ Հաշվարկները ցույց տվեցին, որ դրա համար պետք է լճի մակարդակը իջեցնել մոտ 50 մ։ Մեծ Սևանից ազատված տարածքը կօգտագործվեր գյուղատնտեսական նպատակներով, իսկ փոքրում կմնար մոտ 250 կմ² մակերեսով մի փոքրիկ լճակ։

Նախագծի իրացումը սկսվեց 1933 թ., որը և հանդիսացավ Սևանի պրոբլեմի առաջին փուլի սկիզբը։ 1950-ական թթ. պարզվեց, որ լճի մակարդակի իջեցման այս ծրագիրը պահանջում է արմատական ճշտում հետևյալ 3 պատճառներով.

1. Յուրացնել ազատված հողատարածությունները գյուղատնտեսական նպատակներով չհաջողվեց.

2. Պարզվեց, որ սևանյան էներգիան բավական չէ Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման համար.

3. Հաշվումները ցույց տվեցին, որ դարավերջին Սևանա լիճը կդառնա Հայաստանի ջրամատակարարման միակ հեռանկարային աղբյուրը։

Հաշվի առնելով այս ամենը, ինչպես նաև Սևանա լճի մասամբ ոչնչացման սպառնալիքը, 1959 թ. որոշում ընդունվեց դադարեցնել լճի մակարդակի հետագա իջեցումը և պահպանել նրա մակարդակը՝ ռեգիոնի այլ ջրահավաք ավազաններից գետերի տեղափոխման ճանապարհով։ Այդ միջոցառումը հնարավորություն կտար լճում ապահովել ջրային հաշվեկշռի հավասարակշռություն։ Սակայն, ցավոք, պետք է նշել, որ այս անգամ ևս, Սևանի պրոբլեմի II փուլում, հաշվի չառնվեցին նախատեսված հիդրոտեխնիկական միջամտության հետևանքները լճի էկոհամակարգի վրա։ Այսպիսով, Սևանա լճի բնական ռեսուրսների նպատակային օգտագործման նախագծերի մշակման և իրացման ժամանակ լրջորեն չուսումնասիրվեց գիտական և պրակտիկ մեծ նշանակություն ունեցող շատ կարևոր մի հարց՝ թե ինչպիսի՞ ազդեցություն կունենան լճի ձևաչափական փոփոխությունները նրա էկոհամակարգի գործունեության վրա, հատկապես այն պրոցեսների վրա, որոնք ձևավորում են ջրի որակը և ձկնարդյունավետությունը։

Այսպիսով, առաջացավ Սևանի պրոբլեմի III փուլը, որտեղ խնդիր դրվեց լճի էֆտրոֆացումը կանխելու և նրա խախտված էկոհամակարգը վերականգնելու ուղիներ փնտրել։ Կարճ ասած, առաջացավ ոչ թե լճի ջրերի օգտագործման պրոբլեմը, ինչպես առաջին երկու փուլերում, այլ հենց լիճը փրկելու պրոբլեմը։

Լճի էֆտրոֆացման առաջին նշանները, որոնք ի հայտ եկան 1964 թ., պայմանավորված էին կապտականաչ ջրիմուռների բուռն զարգացմամբ, որից հետո պարզ դարձավ, որ Սևանա լճի խնդրի գիտական հիմնավոր լուծումը հնարավոր է միայն ողջ լճային էկոհամակարգի գործունեության մեխանիզմների խորը, ջրէկոլոգիական ուսումնասիրմամբ և գիտական ուղղության վերակառուցմամբ։

Այսպիսով, Սևանի խնդրի էկոլոգիական դրսևորումների ուսումնասիրությունը ունի մեծ տեսական նշանակություն, քանի որ հնարավորություն է տալիս հասկանալու լճային էկոհամակարգի գործունեության կախվածությունը անտրոպոգեն ներգործության երկու հակադիր ուղղություններից՝ մակարդակի իջեցումից և բարձրացումից։

Անհրաժեշտ դարձավ հաստատել և քանակապես գնահատել այն երկու գլխավոր անտրոպոգեն ազդեցությունների դերը լճի էկոհամակարգի վրա, որոնք հանգեցրին նրա էֆտրոֆացմանը։ Դրանք են՝ լճի ձևաչափական (մորֆոմետրիկ) փոփոխությունները և ավազանում ժողովրդական տնտեսության գործունեության զարգացումը։ Բացի այդ, անհրաժեշտ էր մշակել և հիմնավորել բոլոր այն միջոցառումները, որոնք պետք է ուղղված լինեին լճի էֆտրոֆացման դանդաղեցմանը և հետագա կանխարգելմանը։

Գիտական ուսումնասիրությունների անցկացման և ստացված արդյունքների քննարկման ժամանակ լճի էկոհամակարգը բաժանվել է երկու մեծ ենթահամակարգի՝ «ջրահավաք ավազան» և «լիճ»։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Սևանա լճի անտրոպոգեն էֆտրոֆացման կարևորագույն հատկանիշն է երկու գլխավոր գործոնների համատեղ գործունեությունը՝ ներջրամբարային փոփոխությունները, որոնք ի հայտ եկան մակարդակի 18,8 մ իջեցվելուց հետո, և ջրահավաք ավազանից կենսածին էլեմենտների մեծ քանակով լիճ թափանցելը։ Սրա հետ մեկտեղ, էֆտրոֆացումը զուգորդվել է լճի աղտոտմամբ, որը արդյունք է լճի ավազանում, գետերում և մթնոլորտային տեղումներում աղտոտող և թունավոր նյութերի քանակի մեծացման։

լճում օրգանական նյութի և նրա արոֆիկ արդյունավետության ավելացման, բուսական և կենդանական տեսակների սուկցեսիայի (տեսակափոխանակություն), էկոհամակարգի բնական պրոցեսների անտրոպոգեն խանգարումների, նրա աղտոտման, հողերի ինտենսիվ էրոզիայի, ռեգիոնի սոցիալ-տնտեսական ինտենսիվ և հատկապես էքստենսիվ զարգացման հետևանքով Սևանա լիճը և նրա ջրահավաք ավազանը վերածվել է անորակ բնական ռեսուրսների մի հավաքածուի, այն էլ մեր հանրապետությունում, որը հայտնի է և՛ իր սակավահողությամբ, և՛ սակավաջրությամբ։ Այսօրվա պայմաններում ծայրահեղ անհրաժեշտություն է մշակել Սևանա լճի և նրա ավազանի բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գիտական հիմունքներ, որոնք պետք է անպայման ապահովեն նշված ռեսուրսների վերարտադրումը, պահպանելով հանրապետությանը անհրաժեշտ քանակական և որակական չափանիշները։ Սա բավական բարդ խնդիր է, քանի որ Սևանի էկոհամակարգը գտնվում է ծայրահեղ անհավասարակշռված վիճակում, և այսօրվա պայմաններում աննախատեսելի փոփոխություններ են տեղի ունենում մեկ-երկու տարվա ընթացքում, այն դեպքում, երբ նման փոփոխությունները, մինչև լճի մակարդակի իջեցումը, կարող էին տեղի ունենալ 50—100 տարվա ընթացքում։ Սրա հիմնական պատճառներից մեկը բազմաթիվ տարիների ընթացքում մարդու կողմից լճի և նրա ավազանի բնապաշարների անպատասխանատու, սպառողական օգտագործումն է։

Գտնվելով անհավասարակշռված վիճակում, Սևանի էկոհամակարգը մինչև օրս էլ ենթարկվում է անկայունացնող ազդեցության ինչպես ներլճային պրոցեսների կողմից, այնպես էլ լճի ջրահավաք ավազանում ընթացող անտրոպոգեն աղտոտման պրոցեսների կողմից։

Բարելավել լճի էկոլոգիական վիճակը՝ կարգավորելով և ղեկավարելով ներլճային պրոցեսները, չափազանց դժվար է, և ինչպես նշվեց, միակ ելքը նրա ջրածավալի մեծացումն է, որի ընթացքում կմեծանա լճի բոլոր չափանիշների իներցիոն ունակությունը։ Սա գիտականորեն ապացուցված անժխտելի միջոցառում է, բայց պահանջում է տասնյակ տարիներ։ Իսկ բարելավել լճի էկոլոգիական վիճակը՝ կարգավորելով այն բոլոր պրոցեսները, որոնք ընթանում են լճի ջրահավաք ավազանում, կարող ենք իրագործել այսօր, ամենաչնչին ներդրումներով։

Խոսքը հատկապես կենսածին տարրերի և թունաքիմիկատների օգտագործվող քանակությունների խիստ կրճատման մասին է։ Պետք է մտածել, թե ի՞նչը մեզ համար կենսական նշանակություն ունի՝ Սևանա լիճը, թե՞ ծխախոտը, գարին կամ այլ կուլտուրաները, որոնց տեսակարար կշիռը հանրապետությունում չնչին է, իսկ լճի համար՝ որոշիչ, քանի որ պարարտանյութերի և թունաքիմիկատների զգալի մասը օգտագործվում է սրանց արտադրության պլանները կատարելու համար։ Կամ՝ ո՞րն է լճի համար օգտակար՝ կոնդենսատորների, էլեկտրահաղորդիչների, էլեկտրոնային սարքավորումների, ապակու-մեկուսիչների գործարանների գործունեությունը, որի հետևանքով ավազանի օդը, ջուրը և հողը հարստանում են ծանր մետաղներով, տարբեր թունավոր լուծույթներով և գազերով, թե՞ կարի ֆաբրիկաներինը կամ անթափոն ձեռնարկություններինը։

Անկասկած մենք շատ ենք ուշանում ճիշտ կողմնորոշվելու Սևանի ավազանի և ընդհանրապես հանրապետության բնական ռեսուրսները ճիշտ պահպանելու, վերարտադրելու և օգտագործելու ուղղությամբ տարվող կազմակերպչական և գործնական աշխատանքներում, որոնց ժամանակակից գիտական հիմնավորումները վաղուց արված են գիտությունների ակադեմիայի Սևանի ջրակենսաբանական կայանի և տարբեր ինստիտուտների կողմից։

Պետք է հասկանալ, որ Սևանա լիճը և նրա ջրահավաք ավազանը մեկ կայուն և ամբողջական համակարգ է. անջատել լիճը ավազանից կամ սոցիալ-տնտեսական պլանավորումը և զարգացումը՝ լճից և նրա մեջ թափվող գետերից կլինի կոպիտ էկոլոգիական սխալ։ Եթե ընդունում ենք, որ Սևանի

էկոհամակարգը մի ամբողջություն է՝ իր ենթահամակարգերի միջև եղած ուղղակի և հետադարձ բազմակի կապերով, ապա նրա ղեկավարումը և շահագործումը նույնպես պետք է լինի ամբողջական և կենտրոնացված։

Անհրաժեշտ է, որ հանրապետության կուսակցության Կենտրոնական կոմիտեն, Գերագույն և Մինիստրների խորհուրդները իրենց ուշադրությունը կենտրոնացնեն հետևյալ հանգամանքի վրա. Սևանի ռեգիոնում տարեցտարի աճում են հողերի էրոզիան, հանքային և օրգանական պարարտանյութերի ու թունաքիմիկատների օգտագործումը, կենցաղային աղբի կուտակումները, անասնապահության և անասնագոմերի էկոլոգիական տեսանկյունից անբարեխիղճ վիճակը, անտառների և վայրի բուսականության անմխիթար վիճակը, ավազանի բոլոր գետերի չափից դուրս աղտոտվածությունը և գետերի ջրի անօրեն օգտագործումը, արդյունաբերական ձեռնարկությունների ինքնիշխանությունը, ամբողջ ափամերձ գոտու հակասանիտարական վիճակը, հանգստացողների նկատմամբ խորն անտարբերությունը, չդրված օրենքներով հաստատված, մասնագիտացված ձկնագողությունը։

Հարց է առաջանում. ինչո՞վ են զբաղված ազգային պարկի, հայձուկբուծվարչության, սանէպիդկայանի տարբեր հսկող կազմակերպությունների հսկիչները, որոնց քանակությունը այնքան շատ է, որ միայն Սևան—Մարտունի—Վարդենիս հատվածի ամեն մի կիլոմետրը (միայն լճափնյա) հսկվում է 5—10 հսկիչի կողմից։ Արդյոք նշած անօրինությունների պատճառը Սևանի ռեգիոնի մասնատվածությունը չէ՞ հինգ ադմինիստրատիվ շրջանների, որոնցում, բացի տեղական կազմակերպություններից, գործում են 25-ից ավելի գերատեսչությունների բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկություններ, որոնք ուղղակի և անուղղակի ճանապարհներով օգտագործում են, ինչպես ցանկանան, ավազանի և հատկապես լճի ու նրա մեջ թափվող առանց այն էլ սակավաջուր գետերի բնապաշարները, չկիրառելով ոչ մի բնապաշտպան միջոցառում։

Թույլ տրված հիմնական սխալներից մեկն էլ այն է, որ մինչև այսօր բացակայում է Սևանի ավազանի բնական ռեսուրսների օգտագործման միասնական տնտեսական քաղաքականությունը, որը հաշվի կառներ Սևանի պրոբլեմի էկոլոգիական կողմերը։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է վերանայել Սևանի ավազանի բնական պաշարների շահագործման սկզբունքները, նպատակ ունենալով կայունացնել նրանց որակը և քանակը՝ լճի վրա ժողովրդական տնտեսության գործունեության բացասական ազդեցությունը փոքրացնելու ճանապարհով։

Ժամանակն է, որ հանրապետության կառավարությունը, գիտությունների ակադեմիայի հետ համատեղ, ընդունի Սևանի էկոլոգիական ռեգիոնի բնական ռեսուրսների պահպանման, վերականգնման և շահագործման որոշակի չափանիշներ, որոնք հիմք կծառայեն, որպեսզի Սևանի ռեգիոնի սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորումը և դրա իրականացումը կատարվի բացառապես ելնելով Սևանա լճի և նրա ավազանի ոչ միայն այսօրվա, այլև վաղվա էկոլոգիական անհետաձգելի պահանջներից։ Լիովին հաշվի առնելով Սևանա լճի և նրա ավազանի սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափությունները և յուրահատկությունները, Սևանի ավազանը անհրաժեշտ է վերակազմավորել որպես մեկ առանձին, խիստ հսկվող էկոլոգո-տնտեսական միասնական ընդհանուր ռեգիոն, առանց որի այնտեղ բնական ռեսուրսների պահպանումը, վերարտադրումը և շահագործումը անհնար կլինի։

Մեր ղեկավար մարմինները պետք է պարզ պատկերացնեն, որ կենսածին և աղտոտող նյութերի կոնցենտրացիան լճում կարելի է ավելացնել երկու ճանապարհով. կամ լճի ծավալը փոքրացնելով, որ մենք արդեն անցյալում արել ենք, կամ նշված նյութերի լիճ թափվող քանակությունը մեծացնելով, որը մենք անում ենք այսօր։ Եթե առաջինը ինչ-որ ճանապարհով կասեցվել է, ապա երկրորդ ազդակը ամբողջ ավազանով մեկ ինտենսիվ և էքստենսիվ զարգանում է։

Հաշվի առնելով հանրապետության էկոհամակարգի (օդ, ջուր, հող) և հատկապես ջրային ռեսուրսների էկոլոգիական ծայրահեղ անմխիթար վիճակը, կցանկանայինք անել հետևյալ առաջարկությունները.

1. Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեում, արդեն ստեղծված այլ հանձնաժողովների օրինակով, ստեղծել հանրապետության էկոլոգիական խնդիրներով զբաղվող հատուկ հանձնաժողով՝ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարի անմիջական հսկողության ներքո։ Այդ հանձնաժողովը, առանց որևէ բացառության, իր հսկողության տակ պետք է վերցնի, կոորդինացնի և ղեկավարի բոլոր այն գործնական աշխատանքները, որոնք առնչվում են հանրապետությունում էկոլոգիական այսօրվա իրավիճակին։

2. Հանրապետությունում էկոլոգիական հետազոտությունները ընդհանրապես կենտրոնացված չեն, տարվում են առանձին գիտահետազոտական կազմակերպություններում, լաբորատորիաներում և խմբերում՝ տարբեր ուղղություններով և մակարդակով։ Ուստի առաջարկում ենք էկոլոգիական հետազոտությունները կենտրոնացնել ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությանը կից մեկ ընդհանուր էկոլոգիական ուսումնասիրությունների խորհրդում, որը կկոորդինացնի հանրապետության էկոլոգիական իրավիճակին առնչվող էներգետիկ, տնտեսական, սոցիալական և այլ բնագավառներում տարվող ուսումնասիրությունները ինչպես գիտությունների ակադեմիային, այնպես էլ այլ գերատեսչություններին պատկանող ինստիտուտներում։

Ելնելով վերը նշվածից, նպատակահարմար ենք գտնում ընթերցողին հաղորդակից դարձնելու որոշ դատողություններ, որոնք, ըստ մեզ, սկզբունքային են և արժանի են մեծ ուշադրության։

Հանրապետությունում, ինչպես ասվեց, էկոլոգիական հարցերի մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավում Սևանա լճի պրոբլեմը, որի լուծումը համազգային նշանակության խնդիր է։ Ինչպես նշեցինք, գիտական ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ շարունակվող ծավալուն անտրոպոգեն ներգործության պայմաններում Սևանա լճի բնական ինքնավերականգնման հնարավորությունները, ներկա վիճակում, գործնականորեն սպառված են։ Սևանա լճի էկոլոգիական համակարգի որակական վիճակը ինտենսիվ կերպով վատանում է, և եթե շարունակվի դիտարկվող տենդենցը, ապա մոտակա տարիները կարող են լճի համար դառնալ ճակատագրական։ Տասնամյակների ընթացքում ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Սևանի ռեգիոնում բնապահպան քաղաքականությունը կրել է անսիստեմ բնույթ, որը որպես կանոն ուղեկցվել է բազմամիլիոն և ոչ միշտ արդյունավետ ժողովրդատնտեսական միջոցների ներդրումով։ Ցավոք, նման քաղաքականությունը դեռ շարունակվում է։ Սևանա լճի վերջնական կործանումը հղի է չկանխատեսված տնտեսական և սոցիալական հետևանքներով։

Հաշվի առնելով վերևում շարադրվածը, առաջարկում ենք Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի կառավարումը կազմակերպելու հետևյալ սկզբունքը.

1. Սևանա լիճը և նրա ջրահավաք ավազանը համարել հատուկ էկոլոգատնտեսական ռեգիոն, ստեղծել, այսպես ասած, ռեգիոնալ միասնական կառավարման մի նոր տիպի համակարգ, որին հնարավորություն տրվի ղեկա-

վարելու, հսկելու և կոորդինացնելու ավազանի բոլոր ադմինիստրատիվ շրջանների բնապաշտպան գործունեությունը։

2. Այդ համակարգի ներքո ավազանում գործող իրավասու հիմնարկ-ձեռնարկություններից կազմավորել գիտաարտադրական էկոլոգո-տնտեսական կենտրոն, որի որոշումները և երաշխավորությունները պետք է հիմք հանդիսանան Սևանի էկոլոգիական ռեգիոնին բնորոշ բոլոր խնդիրների լուծման համար։

3. Ընդունել, որ գիտաարտադրական էկոլոգո-տնտեսական կենտրոնը ռեգիոնում պետք է համարվի միակ կազմակերպությունը, որն իր վրա կվերցնի Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանի բնական ռեսուրսների վերարտադրության, պահպանության և ռացիոնալ օգտագործման լիակատար պատասխանատվությունը։

4. Ստեղծված կենտրոնն իր համագործակցությունը հանրապետական այլ տերիտորիալ օրգանների և իրավասու բնապահպան կազմակերպությունների հետ (մասնավորապես՝ Հայկական ԽՍՀ բնության պահպանության պետկոմի հետ, որը, կարծում ենք, ավելի պետք է ծավալի իր գործունեությունը) կիրականացնի պայմանագրային հիմունքներով, պատասխանատվության կոնկրետ տարանջատման, փոխադարձ էկոլոգո-տնտեսական շահագրգռվածության, Հայկական ԽՍՀ օրենսդրության և այլ նորմատիվ ակտերի պահանջների սահմաններում։

Թող չստեղծվի այնպիսի տպավորություն, որ մենք պնդում ենք, թե Սևանի խնդրի լուծման միակ ճանապարհը սա է։ Սակայն կարող ենք հաստատապես ասել, որ այս հարցում անհրաժեշտ է հանդես բերել լուրջ գիտական մոտեցում, քանի որ սխալվելու իրավունք չունենք, քանզի փորձը ցույց է տվել, որ բնապահպանության ասպարեզում մինչև այժմ գոյություն ունեցող կառավարման ավանդական և իրենց չարդարացնող ձևերով ու մեթոդներով Սևանի պրոբլեմը լուծել հնարավոր չէ։